

Կ. ՊՈԼՍՈՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իր կաթողիկոսութեան առաջին տարին իսկ Յակոբ Դ. Ջուղայեցի կը ստիպուի միջամուխ ըլլալ Կ. Պոլսոյ խնդիրներուն, որովհետեւ Եղիազար Անթապցիի և Մարտիրոս Կաֆացիի գլխաւորութեամբ կազմուած էր աշխարհականներու խմբակ մը, որ գահընկէց ըրած էր կաթողիկէամիտ Յովհաննէս Մուղնեցի Պատրիարքը, և իւրացուցած էր պատրիարքական իշխանութիւնը, Մարտիրոս Կաֆացին գործածելով իբրեւ փոխանորդ:

Այս կացութեան վերջ տալու նպատակաւ, Յակոբ Կաթողիկոս նամակ մը կը շրկէ Կ. Պոլիս: Գրաբերը՝ Յակոբ Ղոզպեքճիսի՝ կը հասնի 1656 Յունուար 27ին, Առաջաւորաց Բարեկենդանին: Յաջորդօրը ժողով կը գումարուի Կ. Պոլսոյ վեց եկեղեցիներու գործակալներուն և երէցներուն մասնակցութեամբ, Ս. Նեկողոս եկեղեցւոյն մէջ: Կը բերեն Մուղնեցին Ս. Աստուածածին եկեղեցիէն. Եղիազարն ալ կը հրաւիրեն ժողովի: Կը կարգան Կաթողիկոսին նամակը. «Փիլիպպոս Հոգեւոր